co-funded by

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՄՊՐՈՒԿ 2023» լրագրողական ամենամյա մրցույթ

ՀՀ Քաղաքացիության եւ միգրացիայի ծառայությունը (ՄՔԾ), ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը (ՄԱԿ ՓԳՀ), Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ՄՔՄՄԿ) Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) եւ «Մարդը կարիքի մեջ» միջազգային կազմակերպությունը շարունակում են **«ՃԱՄՊՐՈՒԿ» ամենամյա լրագրողական մրցույթի** ավանդույթը:

Այս տարի մրցույթին կարող են ներկայացվել **2022 թ. նոյեմբերի 28-ից մինչեւ 2023 թ. դեկտեմբերի 4-ն** ընկած ժամանակահատվածում հրապարակված, հետեւյալ թեմաների եւ/կամ բնակչության խմբերի վերաբերյալ նյութերը.

- ապաստան հայցողներ, նրանց խնդիրները.
- փախստականներ, այլ բռնի տեղահանված անձինք, նրանց խնդիրները, առաջարկվող լուծումները, նրանց մասնակցությունն ընդունող համայնքների կյանքին.
- միգրացիոն գործընթացներ եւ միգրանտներ, նրանց խնդիրները.
- միջազգային պաշտպանություն և ինտեգրում.
- քաղաքացիություն չունեցող անձինք եւ նրանց խնդիրները.
- վերադարձ, վերաինտեգրում.
- փախստականներին ընդունող համայնքներ, ծագող մարտահրավերներ.
- աջակցություն միջազգային հանրության կողմից, փախստականների պաշտպանություն:

Մրցույթին կարող են մասնակցել հեռուստատեսության, ռադիոյի, տպագիր մամուլի, էլեկտրոնային մեդիա ոլորտի բոլոր ժանրերում գործունեություն ծավալող լրագրողներ եւ թղթակիցներ, անկախ բլոգերներ, լուսանկարիչներ, մուլտիմեդիայի մասնագետներ:

***Ուշադրություն**. մրցույթի շրջանակում չեն դիտարկվի այն նյութերը, որոնք ստեղծվել են որեւէ դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ վճարովի հիմունքներով:*

Ներկայացված աշխատանքները կգնահատվեն ժյուրիի կողմից, ինչի արդյունքում կազդարարվեն **1-ին, 2-րդ եւ 3-րդ մրցանակների հաղթողները**: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2023 թ. դեկտեմբերին:

Նյութերն անհրաժեշտ է ուղարկել մինչեւ 2023 թ. դեկտեմբերի 4-ը, ժ. 23:59, էլ-փոստի ghalamka@unhcr.org **հասցեով՝ պարտադիր նշելով հետեւյալը.**

- հեղինակի անունը եւ ազգանունը, հեռախոսի համարը, էլ-փոստի հասցեն,
- հրապարակման ամսաթիվը, հղումը, հեղինակության լրացուցիչ հիմնավորում (եթե մասնակիցը տեսնում է դրա կարիքը), լրատվամիջոցի անվանումը:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 095 005 313 (Արամազդ Ղալամքարյան, ՄԱԿ ՓԳՀ), 091 52 02 54 (Նելլի Դավթյան, ՄՔԾ) կամ 091 506 884 (Շուշանիկ Ներսեսյան, «Մարդը կարիքի մեջ») հեռախոսահամարներով:

«ՃԱՄՊՐՈՒԿ 2023» լրագրողական մրցույթի նպատակը թեմատիկ որակյալ լուսաբանումը խրախուսելն է: 2010 թվականից ի վեր՝ Հայաստանում փախստականների, բռնի տեղահանված անձանց և միգրանտների խնդիրների ու նրանց ինտեգրման գործընթացների վերաբերյալ գրագետ մեդիա բովանդակությունը քաջալերելով՝ նպատակ ունենք ոգեշնչելու լրագրողներին՝ առավել ընդգրկուն, ճշմարիտ եւ անաչառ մոտեցումներ ցուցաբերելու տեղահանության և միգրացիայի վերաբերյալ լուսաբանման գործում: «ՃԱՄՊՐՈՒԿ 2023» լրագրողական մրցույթը իրականացվում է Եվրոպական միության Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) միջոցով ֆինանսավորվող ՄՔՄՄԿ-ի, ՄԱԿ ՓԳՀ-ի, ՄՄԿ-ի եւ Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի համաֆինանսավորմամբ: